առ Հայս՝ և առողջ առ Ցոյնս։ Ապա գնացին Հայք 'ի տեսութիւն Գործակալացն պատրաստեալ իրաքանչիւրոց զարժանաւոր ընծայս. 'ի նմին աւուր առաջադրէ Խոճաքեանն Հայոց, թէ եղեալ եմ 'ի մտի տալ բերել աստ զՑոյնս. մի լիցի ձեզ վիրաւորիլ յերթեւեկութենէ նոցին, մանաւանդ դիւրութիւն լինի գործոց ձերոց։ Հայք ասեն. ազգ արարաք նոցա գալ 'ի միասին, այլ նոքա ետուն պատասխանի. թէ չխառնիմք 'ի գործս ձեր, այլ թէ մեզ չէ ինչ վնաս. տայր Աստուած չպակասիլ նոցա աստի 'ի տուէ և 'ի գիշերի։ Այսպիսի եղանակաւ յայտնեաց փոքուքն զներքին դիտաւորութիւն իւր։ Եւ յետ դադարելոյ Գործակալաց զաւուրս 6 գնացին յայցելութիւն Դատաւորին. եւ 'ի լինել բանից 'ի վերայ խնդրոց ազգաց ասէ Դատաւորն. թող զայլ ամենայն խնդիրս. չիք երբէք հնար կատարելոյ զվէճն Բեթղեհէմի. գործակալքն լռեցին խսպառ, ապա խնդրեաց զհրովարտակս պաշտօնէութեան նոցին՝ ընթեռնուլ առանձին, յորմէ վշտացեալ՝ առաքեցին 'ի դառնալն 'ի տեղիս իւրեանց, նոյնպէս և Հայք ըզպատճէն հրովարտակին։ Եւ իբրեւ գնացին պահանջել զայն յետս. ողոքէին զմիտս Նորա աղաչանօք անթերի կատարել զհրամանն Արքային՝ խոստացեալ նմա առնել բարիս 'ի վախճանի, այլ Նորա զայրացեալ ասէ. ընդէ՞ր բերիք զգործակալս, միթէ չէի՞ կարող կատարել զգործս ձեր, զուցէ ոչ ընդունիք զդատաւորութիւնս իմ։ Հայք ասեն. Արքայն որպէս կամեցաւ, այնպէս արար. Դատաւորն ասէ. ուրեմն ընթերցցի յատենի հրովարտակք գործակալաց և 'ի գործ դիցի, եւ ձերն մնասցէ. յետ մեկնելոյ նոցա աստի ընթեռնուլ և գործադրել զայն ըստ արժանոյն օրինօք Շէրիի։ Իմացեալ Հայոց զմիտս Նորա՝ աղաչէին ընթեռնուլ 'ի ժողովի զհրովարտակս Հայոց և Ցունաց. ընդ այս համեցաւ թէեւ՝ բայց պատճառէր թէ չեւ է եկեալ հրովարտակն Ցունաց։ Հայք հաստատէին թէ հրովարտակն Ցունաց եկեալ է, հրաման տուք բերել զայն. իսկ եթէ ոչ, մերն բաւական է. զի երկոքեան 'ի մի և նոյն միտս գրեալ են, մանաւանդ վաւերեալ պատճէն նորին են առ գործակալս։

Ի լսել գործակալաց զայս ամենայն բանս Դատաւորին՝